

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ

ՔՆՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հարությունյան Խ. (ԵՊՀ, Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի

ինստիտուտ, Հայաստան)

khachik.har@gmail.com

Բանալի բառեր՝ ձեռագիր, հիշատակարան, լեզվական քննություն, գրչության կենտրոններ:

Ձեռագիր հիշատակարաններում ամփոփված է մեր ժողովրդի դարավոր պատմությունն իր բոլոր առանձնահատկություններով ու մանրամասներով: Այդ իսկ պատճառով հիշատակարանը կարևորվել է բոլոր ժամանակներում՝ իբրև սկզբնաղբյուր ծառայելով պատմագիտության, ազգագրության և այլ գիտությունների համար: Պետք է ասել, սակայն, որ լեզվական քննությունն այս հարցում գրեթե բացակայում է: Հիշատակարանների լեզվական քննություն են արել Լ. Հովսեփյանը, (ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր. 1997 թ.) և Գ. Զահուկյանը (Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր. 1997 թ.): Նրանց ուսումնասիրություններն այս ասպարեզում կողմնորոշիչ նշանակություն ունեն, սակայն հարցի ուսումնասիրությունն այսքանով չի սպառվում: Բազմաթիվ հիշարժան երևույթներ են նկատվում հիշատակարաններում, որոնք ուսումնասիրված չեն և որով էլ պայմանավորված է նյութի արդիականությունը: Ուսումնասիրությունները մասնագետներին նորանոր տեղեկություններ են հաղորդում դեռևս ամբողջությամբ չուսումնասիրված գրչության կենտրոնների վերաբերյալ: Հայկական լեզնաշխարհի պատմամշակութային ժառանգություններից են գրչության կենտրոնները, և այս ասպարեզում լեզվական քննությունը

բացակայում է: Ճիշտ է, ձեռագիր հիշատակարանների ժողովածուների կազմողները (Ա. Մաթևոսյան, Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ա. Հովհաննսիյան) կատարում են որոշ դիտարկումներ, սակայն դրանք ունեն նկարագրական բնույթ, մինչդեռ լեզվական խորքային քննության կարիք կա:

Այս առիթով մի դիտողություն է անում Ալ. Մարգարյանը դեռևս 1993 թվականին ՊԲՀ-ի իր հոդվածում. «Այդ նյութերը (Նկատի ունի հիշատակարանը- Խ. Հ.), ... ինչ-ինչ պատճառներով լայն ու համակողմանի քննության չեն արժանացել... Իսկ դա, իհարկե, ներելի չի կարելի համարել, որովհետև հայերեն ձեռագրերի հիշատակարաններն իրենց հերթին ու պարզորոշ հայերենի ոչ միայն այն ժամանակվա իրավիճակը, այլև պատմական զարգացման ընթացքը, նրանում կատարված տեղաշարժերն ու փոփոխություններն են պատկերում» (Ալ. Մարգարյան, Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV-XV դդ. հիշատակարաններում, ՊԲՀ, 1993, 1-2, էջ 35): Հիշատակարանն իրոք, լեզվի պատմության համար կարող է լինել սկզբնաղբյուր, որտեղ ըստ դարաշրջանների կարելի է դիտել լեզվական այս կամ այն իրողության փոփոխությունը: Մյուս կողմից՝ հիշատակարանը լեզվի պատմաբանին կարող է հետաքրքրել մի շարք տեսանկյուններից.

- լեզվական ժամանակաշրջանի պարբերացում,
- հնչյունաբանություն, բառակազմություն,
- գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար քերականական աղերսները:

Այսպիսով, ձեռագրերի հիշատակարանները, լինելով մեր մատենագրության ուրույն դրսևորումներ, արժանի են լեզվական համակողմանի քննության, որն առայժմ բավարար մակարդակի վրա չէ, թեև այդ քննության կարիքն արդիական է:

THE ARMENIAN MANUSCRIPT COLOPHON AND THE DEVELOPMENT
PERSPECTIVES OF THE LINGUISTIC STUDY

Harutyunyan Kh. (Yerevan State University, Institute of Ancient Manuscripts after Mesrob
Mashtots "Matenadaran", Armenia)